



Արմենիա
Ինչուրանս

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ
ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ք. Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ.....	3
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ.....	4
ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՄԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	6
ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՁԵՎ.....	6
ԲԱԺԻՆ 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ	7
ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ9	
ԲԱԺԻՆ 9. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԵԾԱՅՈՒՄ	10
ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	11
ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ	14
ԲԱԺԻՆ 12. 12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ).....	16
ԲԱԺԻՆ 13. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ	17
ԲԱԺԻՆ 14. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ	18
ԲԱԺԻՆ 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ	19

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն «Արտասահմանյան ուղևորությունների ընթացքում կորոնավիրուսից կամավոր ապահովագրության կանոնները» (այսուհետ՝ **Կանոններ**) մշակված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2. Արտասահմանյան ուղևորությունների ընթացքում կորոնավիրուսից կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Աջակցության ապահովագրություն» դասի մեջ:

1.3. Կանոնները հանդիսանում են ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը: Ապահովագրության պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, չեն հակասում Կանոններին, օրենքին և այլ իրավական ակտերին:

1.4. Կանոնների համաձայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը (այսուհետ՝ **Ապահովագրող**), գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, ֆիզիկական (<< քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ) անձանց հետ (այսուհետ՝ **Ապահովադիր**) կնքում է Արտասահմանյան ուղևորությունների ընթացքում կորոնավիրուսից կամավոր ապահովագրության պայմանագրեր (այսուհետ՝ **Պայմանագիր**) կամ ապահովագրության վկայագրեր (այսուհետ՝ **Պայմանագիր**):

1.5. Ապահովադիրն իրավունք ունի Պայմանագիր կնքել ինչպես իր օգտին, այնպես էլ հօգուտ այլ անձի (անձանց): Անձը, ում օգտին կնքված է Պայմանագիրը, հանդիսանում է **Ապահովագրված անձ**: Այն դեպքում, երբ Պայմանագիրն Ապահովադրի կողմից կնքված է իր իսկ օգտին, ապա նրա վրա տարածվում են Ապահովագրված անձի համար Կանոններով նախատեսված բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

1.6. Կանոնների համաձայն ապահովագրված անձ կարող են հանդիսանալ մինչև 80 տարեկան (ներառյալ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք:

1.7. Այն դեպքում, երբ Ապահովագրված անձն ինքնուրույն է վճարել բժշկական, բժշկատրանսպորտային և այլ ծառայությունների համար, ապա Ապահովագրողը, Կանոնների պահպանման դեպքում, կհատուցի Ապահովագրված անձի կատարած ծախսերը Ապահովադրի (նրա կողմից լիազորված անձի) կողմից գրավոր դիմումի և բնօրինակ փաստաթղթերի հիման վրա:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1. Կանոնների համաձայն ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի (Ապահովագրված անձի) օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված Ապահովագրության տարածքում Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետ:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

3.1. Կանոնների համաձայն ապահովագրական պատահարներ (դիսկեր) են համարվում Ապահովագրված անձի մոտ Պայմանագրի գործողության ընթացքում հանկարծակիորեն ի հայտ եկած և կատարված COVID-19 ՊՇՌ հետազոտությամբ հաստատված «Կորոնավիրուսային հիվանդություն 2019» հիվանդությունը (այսուհետ՝ COVID-19), որը պահանջում է անհապաղ բժշկական միջամտություն, ինչպես նաև դրա հետևանքով առաջացած մահը, որոնք տեղի են ունեցել Ապահովագրության տարածքում՝ Պայմանագրի գործողության ընթացքում, և որի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է իրականացնել ապահովագրական հատուցում:

3.2. Համաձայն Կանոնների՝ Ապահովագրողը հատուցում է հետևյալ ծախսերը (մեկ ապահովագրական պատահարի դեպքում ներքոնշյալ ընդհանուր ծախսերի գումարը չի կարող գերազանցել 5000 պ/մ չափը)։

3.2.1" անհետաձգելի (շտապ) բժշկական ծառայության ծախսերը, որոնք ցուցված են բժշկի կողմից և ներառում են.

3.2.1.1. շտապ և անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը,

3.2.1.2. հիվանդանոցային բուժման և ստանդարտ տիպի հիվանդասենյակի ծախսերը,

3.2.1.3. արտահիվանդանոցային բուժման ծախսերը, որոնց հաջորդում է տվյալ հիվանդության հիվանդանոցային բուժօգնությունը,

3.2.1.4. Ապահովագրված անձին բուժող բժշկի կողմից ցուցված դեղամիջոցների ծախսերը,

3.2.1.5. բժիշկ-մասնագետի հրավիրման հետ կապված ծախսերը, որոնք հատուցվում են այն դեպքում, երբ տվյալ տարածքում բուժումն անհնար է, և միևնույն ժամանակ անհնար է կամ բժշկի կողմից հակացուցվում է Ապահովագրված անձի տեղափոխումն այլ տարածք

3.2.1.6. COVID-19 ՊՇՌ հետազոտությամբ համար կատարված ծախսը, եթե հետազոտությանը հետևում է հիվանդության հիվանդանոցային բուժում:

3.2.2" Ապահովագրական պատահարի ժամանակ առաջացած բուժօրհանսպորտային ծառայությունների ծախսերը, որոնք ներառում են հանկարծակի COVID-19 հիվանդության հետևանքով կատարված հետևյալ ծախսերը՝

3.2.2.1. Ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մահվան դեպքում վերջինիս աճյունի վերադարձը նրա մշտական բնակության վայր,

3.2.2.2. ծախսեր, որոնք Ապահովագրիչն (Ապահովագրված անձն) իրականացրել է Ապահովագրական պատահարի մասին սերվիսային ընկերությանը կամ Ապահովագրողին տեղեկացնելիս: Այս դեպքում Ապահովագրողին պետք է ներկայացվեն համապատասխան ծախսերը հավաստող փաստաթղթեր:

3.3. Կանոններով ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրված անձին, եթե նա, հետևելով Կանոնների պահանջներին, ինքնուրույն է իրականացրել ծախսերը, բայց ոչ ավել քան 6.2 կետով սահմանված չափը կամ սերվիսային ընկերությանը, եթե Ապահովագրված անձը դիմել է իրենց:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Ապահովագրողը չի հատուցում այն ծախսերը, որոնք հետևանք են.

4.1.1" մինչև COVID-19 ախտորոշումն իրականացված ախտորոշման և բուժման,

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

4.1.2" COVID-19-ի դեպքում պարտադիր չհանդիսացող ախտորոշման և բուժման,

4.1.3" Ապահովագրված անձի մոտ COVID-19 ախտորոշման վերջինիս մահանալուց հետո, անկախ այն հանգամանքից, որ Ապահովագրված անձի մոտ առկա են եղել COVID-19 ախտանիշներ,

4.1.4" քաղաքացիական հուզումների, պատերազմների, զորաշարժերի կամ ռազմական այլ գործողությունների, ահաբեկչական գործողությունների, զանգվածային ակցիաների, գործադուլների կամ զանգվածային այլ միջոցառումների ուղղակի կամ անուղղակի մասնակցությունից հետո ախտորոշված COVID-19, ինչպես նաև շաքարային դիաբետի, օնկոլոգիական հիվանդությունների, իմունային անբավարարության վիճակների, հեպատիտների, սիրտ անոթային համակարգի, հիպերտոնիկ հիվանդության կամ այլ քրոնիկական հիվանդությունների և վիճակների, ինչպես նաև դրանց հետևանքների հետ զուգակցված COVID-19-ի հետևանքով առաջացած մահը,

4.1.5" Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն կամ այն տարածքներ, որտեղ Ապահովագրված անձը հանդիսանում է քաղաքացի կամ ռեզիդենտ, վերադառնալուց հետո կատարված ծախսերը:

4.2. Ապահովագրողը կարող է հատուցում չիրականացնել այն պատահարների համար, որոնք հետևանք են.

4.2.1" առողջական խանգարումները չբուժելու, բժշկի ցուցումներին չհետևելու, բուժող բժշկի չնշանակած կամ նշանակածից ավել դեղորայք ընդունելու, ինչպես նաև առաջացած վնասվածքների բուժումից հրաժարվելու կամ բուժումն ուշացնելու պատճառով առաջացած հիվանդության և (կամ) վիճակների ախտորոշման և բուժման,

4.2.2" առանց բժշկի ցուցումների իրականացված ընդհանուր բուժզննումների և խորհրդատվությունների և դեղորայքի հետ կապված ծախսերը, ոչ ավանդական բժշկական բուժման ծախսերը,

4.2.3" կենսասակտիվ հավելումների, վիտամինոմոնոթերապիայի, կոսմետիկ և հիգիենայի պարագաների և այլ COVID-19 բուժման համար պարտադիր չհանդիսացող դեղորայքի և պարագաների հետ կապված ծախսերը,

4.2.4" պլանային կարգով և դինամիկ հսկողության նպատակով իրականացվող հետազոտությունների հետ կապված ծախսերը,

4.2.5" հոգեբանական վիճակը բարելավելու կամ կանխարգելիչ նպատակով կատարված հետազոտման, դրանց բուժման կամ միջամտությունների ծախսերը,

4.2.6" ակոհոլամոլության, թմրամոլության և թունամոլության, ինչպես նաև Ապահովագրված անձի կողմից ակոհոլի և (կամ) թմրադեղերի և (կամ) հոգեմետ և այլ տոքսիկ նյութերի և (կամ) թունաքիմիկատների օգտագործման հետ զուգակցված COVID-19 ախտորոշման և բուժման ծախսերը,

4.2.7" հանգստավայրերում, առողջարանային համալիրներում, հանգստյան տներում և հյուրանոցներում իրականացված ծախսերը,

4.2.8" մինչև Պայմանագիրը կնքելն Ապահովագրված անձի մոտ առկա հիվանդության, առողջական վիճակների և խանգարումների հետ զուգակցված COVID-19 ախտորոշման և բուժման ծախսերը,

4.2.9" հիվանդանոցային և արտահիվանդանոցային ձևով իրականացվող այն հետազոտությունները (այդ թվում նաև խորհրդատվությունը և լաբորատոր հետազոտությունները), որոնց չի հաջորդում COVID-19 հիվանդանոցային բուժումը,

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

4.2.10" լրացուցիչ հարմարությունների հետ կապված ծախսերը, այդ թվում՝ հարմարավետ հիվանդասենյակի, հիվանդասենյակում հեռուստացույցի, օդորակչի, հեռախոսի առկայություն, թարգմանչի, մերսման, վարսավիրի ծառայություններ և այլն,

4.2.11" ծախսեր, որոնք իրականացվել են չլիցենզավորված բժշկական հաստատության կամ բժշկի ծառայություններից օգտվելու ժամանակ կամ նրանց կարգադրությամբ կամ խորհրդով:

4.3. Ապահովագրական հատուցում չի իրականացվում նաև այն դեպքում, երբ՝

4.3.1" Պայմանագիրը կնքելու պահին Ապահովագրողին Ապահովագրողին հայտնել է ապահովագրական ռիսկի վրա ազդող կեղծ տեղեկություններ կամ եթե տեղի է ունեցել ռիսկի մեծացում Պայմանագրի գործողության ընթացքում և այդ մասին չի տեղեկացվել Ապահովագրողին (COVID-19 հիվանդություն և (կամ) բնորոշ ախտանիշներ ունեցող անձանց հետ շփում և այլն),

4.3.2" Ապահովագրված անձի խնամողների՝ բարեկամների, հարազատների համար կատարված ծախսերը,

4.3.3" Ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասի չափը գերազանցել է Ապահովագրական գումարը (գերազանցող մասով):

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

5.1. Կանոնների հիման վրա կնքված Պայմանագիրը չի գործում Հայաստանի Հանրապետությունում, Արցախի Հանրապետությունում, այն տարածքներում, որտեղ Ապահովագրված անձը հանդիսանում է քաղաքացի կամ ռեզիդենտ, այն երկրներում, որտեղ իրականացվում են ռազմական գործողություններ, կամ որոնք գտնվում են պատերազմական իրավիճակում, այդ թվում՝ քաղաքացիական պատերազմի, անկախ այն հանգամանքից, թե այդ պատերազմը եղել է հայտարարված, թե ոչ, ինչպես նաև այն երկրներում, որոնց նկատմամբ ՄԱԿ-ի կողմից կիրառվում են տնտեսական և (կամ) ռազմական պատժամիջոցներ:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՁԵՎ

6.1. Ապահովագրական գումար է համարվում Պայմանագրով սահմանված այն դրամական գումարը, որի սահմաններում Ապահովագրողը, ապահովագրական դեպք տեղի ունենալիս պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում և որից ելնելով սահմանվում է ապահովագրավճարի չափը:

6.2. Ապահովագրական գումարը սահմանվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6.3. Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովագրված անձին Ապահովագրողի կողմից կատարված ապահովագրական հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը:

6.4. Ապահովագրին (Ապահովագրված անձին) ապահովագրական հատուցում վճարելու դեպքում ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազում է վճարված ապահովագրական հատուցման չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին Ապահովագրողի եզրակացությունը համապատասխան ստորագրությամբ Ապահովագրին առձեռն հանձնելու

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

կամ փոստով ուղարկելու պահից: Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարի չափը:

6.5. Առանց Ապահովագրողի կամ սերվիսային ընկերության կարգադրության, Ապահովադիր (Ապահովագրված անձի) կողմից ինքնուրույն (իր համար) կատարված ծախսերը հատուցվում են առավելագույնը 150 (մեկ հարյուր հիսուն) պ/մ համարժեք ՀՀ դրամի սահմաններում:

6.6. ԱՄՆ և Կանադա ապահովագրական տարածքների կլինիկաներում ամբուլատոր արտահիվանդանոցային) պայմաններում կատարված հետազոտությունները ենթակա են հատուցման առավելագույնը 1000 (մեկ հազար) պ/մ չափով, եթե այդ հետազոտությունների արդյունքում պարզ է դառնում ապահովագրական պատահարի առկայության փաստը, բացառությամբ Կանոնների 6.5 կետով սահմանված դեպքերի:

6.7. Ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, Ապահովագրության ժամկետներից, Ապահովագրության ընդունվող ռիսկի վրա ազդեցություն ունեցող այլ գործոններից:

6.8. Ապահովագրավճարն Ապահովադիր կողմից Պայմանագրի համաձայն կարող է վճարվել միանվագ կամ մաս-մաս՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

6.9. Ապահովագրավճարներն Ապահովադիր կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի ներկայացուցչին (ապահովագրական գործակալին), իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի համապատասխան հաշվարկային հաշվին:

6.10. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադիր փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

6.11. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի չափը:

6.12. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

6.13. Եթե Ապահովադիրն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին Ապահովադիրն ծանուցելու:

ԲԱԺԻՆ 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ

7.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադիր միջև գրավոր համաձայնագիր է, ըստ որի Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի առաջացման ժամանակ Ապահովադիրին (Ապահովագրված անձին) վճարել պայմանագրով սահմանված գումարի չափը նախատեսվում է կողմերի համաձայնությամբ, իսկ Ապահովադիրը

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

պարտավորվում է Պայմանագրում սահմանված ժամկետներում կատարել ապահովագրավճարի վճարում:

7.2. Կանոնների հիման վրա Պայմանագիր կնքելիս Կանոնները դառնում են Պայմանագրի անքակտելի մասը և պարտադիր՝ Ապահովագրողի և Ապահովադրի համար: Ապահովադիրը կարող է պայմանավորվել Ապահովագրողի հետ Պայմանագրում Կանոնների առանձին պայմանների բացառման մասին և Պայմանագրում՝ Կանոններում պարունակվող պայմաններից տարբեր այլ պայմանների լրացման մասին:

7.3. Պայմանագիրը համարվում է կնքված Կանոնների հիման վրա այն դեպքում, եթե Պայմանագրում ուղղակիորեն նշում է կատարվում դրանց կիրառման մասին և Կանոնները կցվում են Պայմանագրին: Պայմանագիր կնքելիս Ապահովադիրն Կանոնները հանձնելու փաստը հավաստվում է Պայմանագրում հատուկ գրառմամբ:

7.4. Պայմանագիր կնքելու համար Ապահովադիրը Ապահովագրողին է ներկայացնում իր կողմից ստորագրված սահմանված կարգի դիմում կամ հայտնում է այդ մասին ցանկացած այլ մատչելի ձևով (բանավոր դիմում և այլն):

7.5. Պայմանագիրը կնքելու համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել

7.5.1" ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի բնօրինակը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և դրա ներդիրների բնօրինակները,

7.5.2" Ապահովագրված անձի անձնագրի բնօրինակը,

7.5.3" տրամադրել գրավոր տեղեկություն, որն ուղղակի կամ անուղղակի կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հնարավոր վնասների չափերի կանխորոշման վրա, ինչպես նաև այլ փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման, ինչպես նաև Պայմանագրի կնքման համար:

7.5.4" մինչև Պայմանագրի կնքումը, բայց ոչ ավել քան 96 ժամ առաջ կատարված COVID-19 ՊՇՌ հետազոտության պատասխանը, եթե այդպիսի հետազոտության անցկացումը նախատեսված է եղել:

7.6. Եթե Պայմանագրի կնքումից հետո հաստատվի, որ Ապահովադիրը (Ապահովագրված անձը) Ապահովագրողին նախապես հայտնել է Կանոններով նախատեսված կեղծ տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագիրը համարել անվավեր և կիրառել օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված հետևանքները:

7.7. Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով՝ մեկ փաստաթուղթ (Պայմանագիր, Վկայագիր) կազմելով, որն առանց փոխանցման իրավունքի անվանական փաստաթուղթ է:

7.8. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրության վկայագիրը կամ ապահովագրական քարտը կորցնելու դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել Ապահովագրողին: Ապահովագրողն Ապահովադիրին (Ապահովագրված անձին) տալիս է կրկնօրինակ: Կրկնօրինակի հանձնումից հետո Պայմանագրի կորցրած օրինակը համարվում է անվավեր և դրանով հատուցումներ չեն կատարվում: Եթե Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) կրկին կորցնում է ապահովագրական փաստաթղթերը, Ապահովագրողի կողմից տուգանք է գանձվում դրանց պատրաստման փաստացի արժեքի չափով:

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

7.9. Պայմանագիրը կարող է ցանկացած ժամանակ փոփոխվել կամ լրացվել առանց Ապահովագրված անձի (Ապահովագրված անձանց) համաձայնության՝ Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա:

7.10. Պայմանագրի պայմանների փոփոխությունները կամ լրացումները կատարվում են Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ, կողմերից որևէ մեկի դիմումի հիման վրա, մյուս կողմի՝ դրա ստացման պահից հինգ օրվա ընթացքում:

7.11. Պայմանագրի պայմանների փոփոխությունները կամ լրացումները ուժի մեջ են մտնում Պայմանագրին կից համաձայնագրի ստորագրման պահից:

7.12. Պայմանագրի գործողության նվազագույն ժամկետ է 3 օրը, առավելագույնը՝ 1 տարին:

7.13. Ապահովագրության Պայմանագրում կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար:

**ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ
ԼՈՒԾՈՒՄ**

8.1. Պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ, որի ժամկետը սահմանվում է Պայմանագրով:

8.2. Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Պայմանագրում: Պայմանագրի ժամկետի սկիզբը չի կարող լինել Պայմանագրի կնքման ժամկետից շուտ:

8.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրա ստորագրման պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը տարածվում է Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարների վրա՝ Ապահովադրի կողմից ապահովագրավճարի կամ դրա մի մասի (տարաժամկետ վճարման դեպքում) մուտքագրումից հետո՝

8.3.1" կանխիկ դրամով վճարման դեպքում - Ապահովագրողի ներկայացուցչի կողմից դրամի ստացման օրվան հաջորդող օրվա 00:00 ժամից,

8.3.2" անկանխիկ հաշվարկների դեպքում - Ապահովագրողի հաշվարկային հաշվին դրամի մուտք լինելու օրվան հաջորդող օրվա 00:00 ժամից, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

8.4. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

8.4.1" Պայմանագրում նշված ժամկետի լրանալուց հետո.

8.4.2" Ապահովագրողի կողմից Կանոնների և դրանց հիման վրա կնքված Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելուց հետո,

8.4.3" Իրավաբանական անձ Ապահովադրի լուծարման կամ Ֆիզիկական անձ Ապահովադրի մահվան, եթե Ապահովագրված անձը կամ այլ անձ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով չի ընդունել ապահովագրավճարը վճարելու՝ Ապահովադրի պարտավորությունը,

8.4.4" Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ,

8.4.5" օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

8.5. Ապահովադրի ցանկությամբ Պայմանագրի դադարեցման դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել

Պայմանագրի բնօրինակը և երկրորդ օրինակը, հակառակ դեպքում Ապահովագրողին վճարված Ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:

8.6. Ապահովադրի պահանջով Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

8.7. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

8.8. Եթե տվյալ Պայմանագրի գործողության ընթացքում տվյալ Պայմանագրի շրջանակներում տեղի է ունեցել ապահովագրական պատահար, որի արդյունքում ապահովագրողը վճարել է կամ պետք է վճարի ապահովագրական հատուցում, ապա Պայմանագրի դադարեցման դեպքում ապահովագրավճարը չի վերադարձվում:

ԲԱԺԻՆ 9. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԵԾԱՑՈՒՄ

9.1. Պայմանագրի գործողության ժամանակահատվածում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է անհապաղ տեղյակ պահել Ապահովագրողին Պայմանագրի կնքման պահին իր կողմից հայտնած հանգամանքների իրեն հայտնի էական փոփոխությունների և այլ հանգամանքների մասին, որոնք էապես կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա:

9.2. Ապահովագրողը, ծանուցված լինելով այն հանգամանքների մասին, որոնք հանգեցնում են ռիսկի աստիճանի մեծացմանը (այդ թվում Ապահովադրի (Ապահովագրված անձի) մոտ քրոնիկ հիվանդությունների կամ հաշմանդամության ի հայտ գալը), իրավունք ունի պահանջել Պայմանագրի պայմանների փոփոխում կամ ռիսկի աստիճանի մեծացման չափին համապատասխան լրացուցիչ ապահովագրավճարի մուծում:

9.3. Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից սույն կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել դադարեցնել Պայմանագիրը և Պայմանագրի դադարեցման առնչությամբ հատուցել վնասները՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

9.4. Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) դեմ է պայմանների փոփոխությանը կամ լրացուցիչ ապահովագրավճարի մուծմանը, ապա Ապահովագրողն իրավունք ունի օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն պահանջել Պայմանագրի լուծում:

ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

10.1.1" Ստանալ ապահովագրական հատուցում՝ Պայմանագրի համաձայն, Ապահովագրական գումարի սահմաններում,

10.1.2" Կանոններով նախատեսված կարգով Պայմանագրի պայմանների փոփոխման,

10.1.3" Վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ Կանոններով սահմանված կարգով,

10.1.4" Ծանոթանալ Պայմանագիրը կնքելու պահին գործող ապահովագրական սակագների հետ

10.1.5" Ապահովագրել լրացուցիչ անձանց Կանոններով սահմանված կարգի համաձայն, ընդ որում նոր ընդգրկված անձանց նկատմամբ Պայմանագրի գործողության ժամկետը չի կարող գերազանցել Պայմանագրի գործողության ընդհանուր ժամկետը կամ վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը մեկ կամ մի քանի Ապահովագրված անձանց նկատմամբ վերջիններիս կողմից Ապահովագրողին ուղղված համաձայնության առկայության դեպքում: Ապահովագրված անձանց քանակի նվազման դեպքում ապահովագրավճարի վերադարձն իրականացվում է Պայմանագրի դադարեցման կարգին համապատասխան,

10.1.6" Վերահսկել Կանոնների և Պայմանագրի պայմանների կատարումը,

10.2. Ապահովադիրը պարտավոր է՝

10.2.1" Պայմանագիր կնքելիս Ապահովագրողի պահանջով վերջինիս հայտնել ռիսկայնության աստիճանը որոշող տեղեկություններ,

10.2.2" Մուծել ապահովագրավճարները՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում,

10.2.3" Կատարել Կանոններով և Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները,

10.2.4" Ապահովագրված անձին ծանոթացնել ապահովագրության Կանոններին, Պայմանագրի պայմաններին և ծառայությունների մատուցման կարգին:

10.2.5" Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը պետք է Պայմանագրում նշված հեռախոսահամարով կամ գրավոր, այդ թվում՝ կամ medical@armeniansurance.am էլեկտրոնային հասցեով Ապահովագրողին կամ սերվիսային Ընկերությանը տեղյակ պահի վարակային հիվանդությամբ վարակվելու մասին՝ 48 ժամվա ընթացքում կամ հնարավորության դեպքում՝ անմիջապես: Նշված ժամկետը խախտելու դեպքում՝ ապահովադիրը կամ ապահովագրված անձը պարտավոր է գրավոր հիմնավորել ուշացման պատճառը: Առանց գրավոր հիմնավորման սահմանված ժամկետում Ապահովագրողին չտեղեկացնելը հիմք է հանդիսանում ապահովագրական հատուցման մերժման համար (բացառությամբ Կանոնների 6.5 կետով սահմանված դեպքերի):

10.2.6" Եթե Ապահովադիրն (Ապահովագրված անձը, Շահառուն) Ապահովագրողին տեղեկացնում է պատահարի մասին, սակայն երկարատև բուժման մեջ գտնվելու հետևանքով չի կարողանում Ապահովագրողին ներկայացնել հատուցման վճարման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ապա Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պարտավոր է առնվազն 30 օրը մեկ անգամ Ապահովագրողին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն

(տեղեկացման փաստը հավաստող ցանկացած միջոցով) հիվանդության և բուժման ընթացքի վերաբերյալ: Այդ ժամկետներում և կարգով չտեղեկացնելու դեպքում Ապահովագրողը կարող է մերժել հատուցման վճարման հարցը:

10.2.7" Բժշկական ծառայությունների ստացման պահից (ավարտից՝ ներառյալ կարանտինային ժամկետը) մշտական բնակության վայր վերադառնալուց 10 աշխատանքային օրվանից ոչ ուշ Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական հատուցման համար սահմանված կարգի գրավոր դիմում՝ նշելով դիմումի տրման պահին ապահովագրական դեպքի վերաբերյալ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները և ապահովագրական դեպք տեղի ունենալու փաստը հաստատող փաստաթղթերը, այդ թվում ներկայացնել՝

- *Բժշկական հիմնավորում*՝ Ցանկացած բժշկական փաստաթուղթ, որով կհիմնավորվի համաճարակային վարակով վարակված լինելու փաստը, իսկ մահվան դեպքում մահվան պատճառ հանդիսացած հիվանդության և վարակի միջև պատճառահետևանքային կապը հավաստող փաստաթուղթ (մահվան էպիկրիզ, դատաբժշկի եզրակացություն, պաթանատոմի եզրակացություն և այլն) և մահվան վկայական:

10.3. Ապահովագրված անձն իրավունք ունի՝

10.3.1" Պայմանագիրը կամ ապահովագրական քարտը կորցնելու դեպքում ստանալ դրա կրկնօրինակը:

10.3.2" Ապահովադիր իրավաբանական անձի լուծարման դեպքում իր վրա վերցնել Ապահովադրի պարտականությունները կապված ապահովագրավճարի սահմանված ժամկետներում և ամբողջ ծավալով վճարման հետ,

10.3.3" Ստանալ պարգևաբանումներ Կանոնների, Պայմանագրի պայմանների և ծառայությունների տրամադրման կարգի վերաբերյալ:

10.4. Ապահովագրված անձը պարտավոր է՝

10.4.1" Պայմանագրի կնքման համար Ապահովագրողին տրամադրել ճշգրիտ և արժանահավատ տվյալներ,

10.4.2" Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը պետք է

10.4.3" Պայմանագրում նշված հեռախոսահամարով կամ գրավոր, այդ թվում՝ կամ medical@armeniansurance.am էլեկտրոնային հասցեով Ապահովագրողին կամ սերվիսային Ընկերությանը տեղյակ պահի վարակային հիվանդությամբ վարակվելու մասին՝ 48 ժամվա ընթացքում կամ հնարավորության դեպքում՝ անմիջապես: Նշված ժամկետը խախտելու դեպքում՝ ապահովադիրը կամ ապահովագրված անձը պարտավոր է գրավոր հիմնավորել ուշացման պատճառը: Առանց գրավոր հիմնավորման սահմանված ժամկետում Ապահովագրողին չտեղեկացնելը հիմք է հանդիսանում ապահովագրական հատուցման մերժման համար (բացառությամբ կանոնների 6.5 կետի):

10.4.4" Հետևել Կանոնների պահանջներին, Պայմանագրի պայմաններին,

10.4.5" Պահպանել ապահովագրական փաստաթղթերը և բժշկական օգնություն ստանալու նպատակով չփոխանցել այն այլ անձանց,

10.4.6" Ժամանակին հաղորդել Ապահովագրողին իր անձնագրային տվյալների կամ բնակության (հաշվառման) վայրի փոփոխման մասին,

10.4.7" Դիտավորությամբ չստեղծել իր առողջության համար վտանգավոր իրավիճակներ,

10.4.8" Ապահովագրողի կողմից լիազորված բժշկին հնարավորություն ընձեռնել ծանոթանալու իր առողջական վիճակին, այդ նպատակով անցնել համապատասխան բժշկական զննումներ և հետազոտություններ,

10.4.9" Մինչև 18 տարեկան Ապահովագրված անձանց Պայմանագրով սահմանված իրավունքներն ու պարտականությունները, բացառությամբ Պայմանագրի համաձայն ծառայությունների ստացման իրավունքը, ՀՀ օրենսդրությանը համաձայն իրականացնում են նրանց օրինական ներկայացուցիչները:

10.5. Ապահովագրողն իրավունք ունի՝

10.5.1" Ստուգել Ապահովագրի (Ապահովագրված անձի) կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև Ապահովագրի (Ապահովագրված անձի) կողմից Կանոնների և Պայմանագրի պահանջների և պայմանների կատարումը,

10.5.2" Սահմանել ապահովագրավճարի չափը՝ համաձայն իր սակագների,

10.5.3" Դատական կարգով հայտ ներկայացնել Բժշկական օգնություն իրականացնողներին՝ վերջինիս մեղքով Ապահովագրված անձին հասցված վնասը փոխհատուցելու նպատակով,

10.5.4" Մինչև Պայմանագիրը կնքելը պահանջել, որպեսզի Ապահովագիրը (Ապահովագրված անձը) լրացնի հարցաթերթիկ և/կամ անցնի նախնական բժշկական փորձաքննություն, Ապահովագրված անձին ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված բժշկական և այլ հիմնարկներում,

10.5.5" Մինչև Պայմանագիր կնքելը առողջական վիճակի մասին հարցաթերթիկ լրացրած Ապահովագրված անձից պահանջել լրացուցիչ հետազոտությունների արդյունքների և այլ փաստաթղթերի ներկայացում, որոնք կարող են անհրաժեշտ համարվել հարցաթերթիկում նշված տեղեկությունների ստույգությունը ճշտելու նպատակով,

10.5.6" Ցանկացած պահի Ապահովագրված անձի մոտ ուղարկել իր կողմից լիազորված բժիշկ-մասնագետին՝ նրա առողջական վիճակը պարզելու նպատակով,

10.5.7" Ծանոթանալ Ապահովագրված անձի բժշկական փաստաթղթերին, որոնք արտացոլում են նրա հիվանդության պատմությունը, ֆիզիկական և հոգեկան վիճակը, ախտորոշումը և բուժման արդյունքների կանխատեսումը,

10.5.8" Հարցաթերթիկի լրացման, լրացուցիչ տեղեկությունների ստացման և նախնական բժշկական զննման արդյունքներով մերժել Պայմանագրի կնքումը,

10.5.9" Մերժել հատուցման վճարումը օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմանագրով կամ Կանոններով սահմանված կարգով,

10.5.10" Ամբողջովին կամ մասնակիորեն մերժել ապահովագրական հատուցման վճարումը, և/կամ վաղաժամկետ դադարեցնել Պայմանագրի գործողությունը՝ առողջական վիճակի մասին նախապես լրացված հարցաթերթիկում ոչ ստույգ կամ ոչ արժանահավատ տեղեկություններ հայտնաբերելու դեպքում,

10.5.11" Վաղաժամկետ կամ ժամանակավորապես դադարեցնել Պայմանագրի գործողությունը՝ օրենքով, Պայմանագրով և Կանոններով սահմանված դեպքերում,

10.5.12" Ինքնուրույն պարզել ապահովագրական պատահարի հանգամանքները,

10.5.13" իրականացնել Ապահովագրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

10.6. Ապահովագրողը պարտավոր է՝

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

10.6.1" Ապահովադիրին ծանոթացնել ապահովագրության պայմաններին (Կանոններին), Ապահովադիր պահանջով ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը,

10.6.2" Ապահովադիր պահանջով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Պայմանագրում, եթե դրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,

10.6.3" Պայմանագրի կնքման ժամանակ Կանոնների մեկ օրինակը տրամադրել Ապահովադիրին (Ապահովագրված անձին):,

10.6.4" Ապահովագրական պատահար տեղի ունենալիս վճարել ապահովագրական հատուցում՝ Կանոններով և Պայմանագրով նախատեսված կարգով,

10.6.5" Ապահովել Ապահովադիրին (Ապահովագրված անձին) վերաբերվող տեղեկությունների գաղտնիությունը՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսվող դեպքերի,

10.6.6" Ապահովադիրն ու Ապահովագրողն ունեն օրենքով, Կանոններով և Պայմանագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

**ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

11.1. Ապահովագրական հատուցումը ապահովագրական դեպքը տեղի ունենալու հետևանքով Պայմանագրով և Կանոններով նախատեսված Ապահովագրողի կողմից հատուցման գումարի վճարումն է:

11.2. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

11.2.1" Ապահովադիր (Ապահովագրված անձի) կողմից դիմում՝ հատուցում ստանալու վերաբերյալ,

11.2.2" Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով),

11.2.3" Ֆիզիկական անձ Ապահովադիր դեպքում՝ վերջինիս անձնագիրը (Ապահովագրողի պահանջով),

11.2.4" իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականը և դրա ներդիրները (Ապահովագրողի պահանջով),

11.2.5" Ապահովագրված անձի անձնագիրը,

11.2.6" Ապահովագրական պատահարի վերաբերյալ իրավասու մարմինների կողմից տրված և հաստատված համապատասխան փաստաթղթերը (Ապահովագրողի պահանջով), բժշկի (բժշկական հաստատության) կողմից նշանակված դեղորայքի ցանկն իր գներով, առողջական վիճակի մասին հաստատված տեղեկանքը, նշանակված ցուցումները, ինչպես նաև հաստատված փաստաթուղթ, որը կհավաստի Ապահովագրված անձի կողմից տվյալ Ապահովագրական պատահարի գծով բժշկին (բժշկական հաստատությանը) դիմելը, դիմելու ամսաթիվը, մատուցված ծառայությունները, բուժման տևողությունը, մինչև ապահովագրվելը կատարված COVID-19 ՊՇՌ հետազոտության պատասխանը (եթե այդպիսի հետազոտության անցկացումը նախատեսված է եղել Կանոններով ամ Պայմանագրով), ինչպես նաև ապահովագրվելուց հետո COVID-19 ՊՇՌ հետազոտության պատասխանը, որով հաստատվել է հիվանդության առկայությունը (եթե Ապահովագրողը գրավոր կերպով Ապահովադիրին (Ապահովագրված անձին) չի ազատել նման պարտականությունից),

11.2.7" Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր,

11.2.8" Ապահովագրողի պահանջով ներկայացված փաստաթղթերի հայերեն թարգմանությունները՝ թարգմանչի կնիքով հաստատված:

11.3. Ապահովագրված անձի մահվան դեպքում, եթե աճյունի տեղափոխումը իրականացվել է ոչ Ապահովագրողի կամ սերվիսային ընկերության կողմից, ապա այդ տեղափոխման ծախսերի դիմաց հատուցում ստանալու համար վերջինիս ժառանգներն Ապահովագրողին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

11.3.1" Ապահովագրված անձի մահվան վկայականի բնօրինակը կամ նոտարական գրասենյակի կողմից հաստատված պատճենը,

11.3.2" Ապահովագրված անձի մահվան պատճառների վերաբերյալ բժշկական տեղեկանքը (վկայականը),

11.3.3" Մինչև ապահովագրվելը կատարված COVID-19 ՊՇՌ հետազոտության պատասխանը (եթե այդպիսի հետազոտության անցկացումը նախատեսված է եղել Կանոններով կամ Պայմանագրով), ինչպես նաև ապահովագրվելուց հետո մինչև մահը կատարված COVID-19 ՊՇՌ հետազոտության պատասխանը, որով հաստատվել է հիվանդության առկայությունը,

11.3.4" համապատասխան իրավասու մարմնի կողմից հաստատված ժառանգության իրավունքը հավաստող փաստաթուղթը կամ դրա պատճենը:

11.4. Բոլոր ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն կնիքով կամ դրոշմակնիքով կամ ֆիրմային ձևաթղթի վրա (հակառակ դեպքում բժշկական ծախսերի ժամանակ պետք է ներկայացվեն բուժող բժշկի անունը, ազգանունը և հեռախոսահամարը և (կամ) էլեկտրոնային հասցեն, ինչպես նաև այն բժշկական հաստատության հասցեն և հեռախոսահամարը և (կամ) էլեկտրոնային հասցեն, որտեղ Ապահովագրված անձը ստացել է Ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասվածքի և (կամ) հիվանդության համար բուժումը):

11.5. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են վնասի պատճառների և (կամ) չափի հիմնավորման համար:

11.6. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ պատճենների) իսկության, հավաստիության և ոչ կեղծ լինելու բոլոր իրավական հետևանքների ռիսկերը:

11.7. Եթե հատուցման իրականացման համար անհրաժեշտ են լրացուցիչ տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովագրված անձից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն:

11.8. Կանոններով սահմանված ժամկետում Ապահովադիր (Ապահովագրված անձի) կողմից Պայմաններով անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ սահմանված 3 (երեք) ամիս ժամկետը երկարաձգելու մասին գրավոր որևէ միջնորդություն չներկայացնելու դեպքում Ապահովագրողը, Կանոնների համաձայն, Ապահովադիր կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը՝ սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո:

11.9. Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, Ապահովագրողը,

ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել ևս 6 (վեց) ամիս ժամկետով կամ մինչև Ապահովագրված անձի երկարատև բուժման ավարտը:

11.10. Ապահովագրողն Ապահովագրական պատահարին առնչվող և սույն Պայմանագրով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է ապահովագրական հատուցում տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշում:

11.11. Ապահովագրողը Ապահովադրի (Ապահովագրված անձի) պահանջով ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ եզրակացությունը (որոշումը) հաստատելուց հետո առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում այն առձեռն կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադրին (Ապահովագրված անձին):

11.12. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը 5 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրված նամակով ուղարկվում է Ապահովադրին (Ապահովագրված անձին)՝ նրա մշտական բնակության կամ գործունեության հասցեով:

11.13. Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում:

11.14. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը կամ հետ պահանջել այն, եթե պարզվի, որ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադրի կողմից Ապահովագրողին տրամադրվել են ապահովագրական ռիսկի գնահատման վրա ազդող կեղծ տեղեկություններ կամ այն դեպքերում, երբ Ապահովագրված անձի (Ապահովադրի) կողմից իրականացվել են միտումնավոր գործողություններ, որոնք ուղղված են եղել կամ նպաստել են Ապահովագրական պատահարի տեղի ունենալուն:

11.15. Ապահովադիրը պատահարի հետ կապված յուրաքանչյուր նամակի, պահանջի, հայցի, դատաքննության, հետաքննության կամ ցանկացած այլ գործընթացի վերաբերյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը պետք է անմիջապես ներկայացնի Ապահովագրողին:

11.16. Եթե Կանոնների համաձայն ապահովագրական հատուցման պահանջի ժամանակ գոյություն ունի այլ ապահովագրության պայմանագիր/վկայագիր, որով հատուցվում է նույն պատահարի հետևանքով առաջացած վնասը, ապա Ապահովագրողը հատուցում է իրականացնում իր համամասնական բաժնի չափով:

ԲԱԺԻՆ 12. 12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

12.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում Ապահովագրության պայմանագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելքների:

12.2. Այն դեպքում, երբ 12.1 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել

Ապահովագրության պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:

12.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Ապահովագրության պայմանագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 13. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

13.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովադիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

13.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ձայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ձայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային

փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

13.3. Կետ 13.1-ում նշված Ապահովագրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովագրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

13.4. Ապահովագրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովագրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովագրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովագրի (Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետագարձ ուժ չունի:

13.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագրի կնքելով, Ապահովագրի (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 13.1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովագրի (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 14. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14.1. Կանոնների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

14.2. Պայմանական միավոր (պ/մ) – Շենգենյան տարածքում ներառված երկրներում տեղի ունեցած պատահարի համար ապահովագրական հատուցման վճարման միջոց է համարվում Եվրոյին համարժեք ՀՀ դրամը, որը հաշվարկվում է Ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով, իսկ Շենգենյան տարածքից դուրս գտնվող երկրների համար, անկախ տվյալ երկրի ազգային արժույթից՝ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը, որը հաշվարկվում է Ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով :

ԲԱԺԻՆ 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

15.1. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Ապահովագրության պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

15.2. Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ "Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին" ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՀՀ դատարաններում: